




ԳՈՂԹՆ, ԵՐԵՋԱԿ, ԾԱՀՈՒԿ, ՆԱԽԾԱՎԱՆ...

Եթե պատմությունը ժողովրդի ընդհանրացված կենսագրությունն է ժամանակի ու տարածության մեջ, ապա մշակութային ժառանգությունը արժևորման այն տեսանկյունի և ստույգ չափանիշն է, առանց որի դժվար է պատկերացնել որևէ ճշմարիտ պատմություն:

Հազարամյակների ընթացքում հայ ժողովրդի ստեղծած հոգևոր և նյութական մշակույթի հուշարձանները, թե՛ Սուլեյմանյան Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս՝ տասնյակ հազարներով են հաշվվում: Պատմա-մշակութային արժեքների մի անկրկնելի թանգարան է Նախիջևանի ԻՍՍՀ տարածքը, որի կազմում են Մեծ Հայքի Վասպուրական և Սյունիք աշխարհների մի քանի գավառներ (Գողթն, Երեջակ, Նախճավան, Ծափուկ, Ծարուր), միջնադարյան քաղաքներ (Նախճավան, Զուղա, Ագուլիս), նշանավոր վանական համալիրներ ու մշակութային կենտրոններ (Մեսրոպավան, Աստապատ, Աբրակունիս, Ծոռոթ, Ցղնա և այլն):

Արգամ Արվազյանի 1978 թ. հրատարակած «Նախիջևանի պատմա-ճարտարապետական հուշարձանները» գիրքը փաստորեն առաջին անգամ ամբողջության մեջ ներկայացրեց երկրամասի հուշարձանների հիմնական մասը: Եռանդով և միջոցառությամբ շարունակելով իր ուսումնասիրու-

թյունները, հեղինակը շուտով հրապարակի վրա դրեց նոր, հուշարձանների ընդգրկմամբ ավելի ընդարձակ աշխատություններ. «Հայկական ճարտարապետության հուշարձանները Նախիջևանի ԻՍՍՀ-ում» (ռուս-



րեն, Երևան, 1981), «Ագուլիս», «Զուղա» (Երևան, 1984), իսկ բոլորովին վերջերս՝ «Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները» համահավաք ցուցակը («Հայաստան» հրատ., Երևան, 1986): Այն ընդգր-

կում է հնագույն ժամանակներից մինչև մեր դարի սկզբները կառուցված պատմա-ճարտարապետական և հնագիտական 610 հուշարձան: Համահավաք ցուցակում հուշարձանները ներկայացված են որոշակի համակարգով, համարակարգված, ըստ հեղինակի մշակած հարցակարգի, որի պարտադիր կետերն են՝ հուշարձանի անվանումը, կառուցման ժամանակը, տեղը, ճարտարապետը, պատվիրատուն կամ մեկենասը, հորինվածքը, շինանյութը, վերականգնումները, մուտքը, արքիտեկտուրայի տեսքը, գմբեթը, արձանագրությունները, որմնակարները, պատկերաքանդակները, զարդաքանդակները, շրջակայքը, վիճակը: Այս հիմնական հարցերից բացի գյուղատեղերի, գերեզմանատների, հնագիտական նյութերի և բերդերի համար կան լրացուցիչ հարցեր, որոնց շուրջ հյուսվում է հուշարձանի նկարագրությունը անհրաժեշտ տեղեկություններով ու մանրամասներով:

Համահավաքն ընդգրկում է Նախիջևանի շրջանի գլխավոր հուշարձանները (200 վանք և եկեղեցի, 60 մատուռ ու արքավայր, 84 գյուղատեղի ու քաղաքատեղի, 41 բերդ և այլն), սակայն, ինչպես առաջաբանում

նշում է հեղինակը, «խաչքարերի ու պատկերաքանդակներով տապանաքարերի հետ միասին Նախիջևանի հայկական պատմա-ճարտարապետական, կոթողային և այլ հուշարձանների թիվը անցնում է 4500 միավոր-հուշարձանից»:

Գրքում առանձին ենթավերնագրով ներկայացված է Նախիջևանի ԻՍՍՀ բնակավայրերի ցանկը՝ պատմական, հին, նոր և հաճախ փոփոխված անվանումներով: Համահավաքին կցված է «Նախիջևանի պատմության և մշակույթի հիմնական հուշարձանները» քարտեզ-ուղեցույցը, որը ևս խիստ կարևոր է նման կարգի աշխատության համար:

Արգամ Ալվազյանի երկարամյա հետազոտությունների արդյունք հանդիսացող համահավաք ցուցակը, որի հրատարակությունը իրականացրել է ՀՍՍՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ընկերությունը, արժեքավոր ներդրում է Նախիջևանի հայկական հուշարձանների հետազոտության մասնասիրության, դրանց մասսայականացման գործում:

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

